ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՊ-ԷԱՃԱՊՁԲ-09/24» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «25» ապրիլի 2024թ., ժամը 12:00

Մասնակցում էին՝

Զոհրաբյան Գոհար	-Ֆինանսատնտեսական վարչության ֆինանսական բաժնի պետ-գլխավոր հաշվապահ
Պետրոսյան Նաիրա	-Արարողակարգի և փաստաթղթաշրջանառության վարչության պետի տեղակալ
Խաչատրյան Վիկտորյա	-Արարողակարգի և փաստաթղթաշրջանառության վարչության գլխավոր մասնագետ
Բեդիրյան Ծովինար	-Ֆինանսատնտեսական վարչության ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար Աննա Անանյան

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով 23.04.2024թ. ժամը 12:00-ին:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1. Տեղեկություններ հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

ՀՊ-ԷԱՃԱՊՁԲ-09/24 ծածկագրով գնումների էլեկտրոնային (eauction.armeps.am) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	Մասնակցի անվանումը	ՀՎՀՀ	Կապի միջոցը էլ.փոստ
1	ՅՈՒՔԱՐ ՍՊԸ	08421386	info@ucarmotors.am
2	Ջակո Ավտոդետ ՍՊԸ	00449313	head@autosan.am
3	Ջեյքարս ՍՊԸ	01248422	ggrigoryan2011@gmail.com

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Նախահաշվային արժեքը	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Մասնակցի կարգավիճակ
			Գնային առաջարկ առանց ԱԱՀ	ԱԱՀ	Գնային առաջարկ	Գնային առաջարկ առանց ԱԱՀ	ԱԱՀ	Գնային առաջարկ	
1	ՅՈՒՔԱՐ ՍՊԸ	66 850 000	70 000 000	0%	70 000 000	59 998 000	0%	59 998 000	
	Ջակո Ավտոդետ ՍՊԸ		66 850 000	0%	66 850 000	61 502 000	0%	61 502 000	
	Ջեյքարս		66 850 000	0%	66 850 000	62 170 500	0%	62 170 500	

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ամփոփվել է 23.04.2024թ. ժամը 13:00-ին:

Համակարգի կողմից՝

2.1. ՅՈՒՔԱՐ ՍՊԸ-ն առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել:

3. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

3.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա չեն հրավերով սահմանված հետևյալ փաստաթղթերը: Մասնավորապես՝

- հայտի ապահովումը
- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը
- հրավերով սահմանված կարգով իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը

4. Տվյալներ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

4.1 Մասնակցի կողմից հայտով ներկայացված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը կազմված չէ հրավերի պայմաններին համապատասխան:

4.2 Համակարգում մուտքագրված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը կազմված չէ հրավերի պայմաններին համապատասխան:

5. Տեղեկություններ Հրավերի 1-ին մասի 3.5 կետում նշված հիմնավորումների, հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, գնման վերաբերյալ ստացված հարցումների և ներկայացված պարզաբանումների մասին

5.1 Հրավերի 1-ին մասի 3.5 կետում նշված հիմնավորումներ, հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հրավերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. «ՀՊ-ԷԱՃԱՊՁԲ-09/24» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց.

6.1 հիմք ընդունելով սույն արձանագրության 3.1 կետը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ ՅՈՒՔԱՐ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել,

6.2 ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ ՀՊ-ԷԱՃԱՊՁԲ-09/24 ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Զոհրաբյան Գոհար _____

Պետրոսյան Նաիրա _____

Խաչատրյան Վիկտորյա _____

Բեդիրյան Ծովինար _____

Հանձնաժողովի քարտուղար _____ Աննա Անանյան